Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 8

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2024-2025 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան 02 հունիսի 2025թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 15–ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. **ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի «Կենսաբժշկագիտության» ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համալրման նպատակով մրցութային ընտրության անցկացման հարցը:**

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

Լսեցին՝ Գիտխորհրդի նախագահ, ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյանին, ով ներկայացրեց նիստի օրակարգը, որի հիմնական հարցը «Կենսաբժշկագիտության» ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համալրման նպատակով մրցութային ընտրության անցկացումն է՝ համաձայն ԵՊՀ ռեկտորի № 78/24-Լ (առ 28.04.2025թ.) հրամանի: Նա գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ մրցույթին մասնակցելու համար դիմել է միայն կ.գ.դ., դոցենտ Հովիկ Հարությունի Փանոսյանը, ում կողմից ԵՊՀ որակավորման մանդատային հանձնաժողովին ներկայացվել են համապատասխան փաստաթղթերը: Դրական եզրակացություն ստանալուց հետո Հ.Հ. Փանոսյանի թեկնածությունը քննարկվել է Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնում,

ինչպես նաև մրցութային հանձնաժողովում: Կենսաբժշկագիտության ամբիոնը և մրցութային հանձնաժողովը երաշխավորել են նրան՝ հայտարարված մրցույթին մասնակցելու համար (ամբիոնի և մրցութային հանձնաժողովի նիստերի քաղվածքները կցվում են)։ Ելույթ ունեցավ նաև գիտքարտուղար բ.գ.թ., դոցենտ Ա. Դադայանը, ով նշեց, որ մրցույթին մասնակցող թեկնածուի գիտական կոչումը, աշխատանքային ստաժը և գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում են հայցվող պաշտոնի համար ներկայացվող բոլոր պահանջներին։

Հ.Հ. Փանոսյանը հեղինակ է 3 ուսումնամեթոդական ձեռնարկների, ավելի քան 90 գիտական հոդվածների, հանդիսանում է Springer Nature և Elsevier Academic Press հրատարակչություններում տպագրված 5 գրքերի համախմբագիր: Վերջին 5 տարում հրատարակել է 14 գիտական հոդված՝ բարձր ազդեցության գործակից ունեցող հանդեսներում, 3 գիրք և 7 գրքի գլուխներ: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 2 թեկնածուական ատենախոսություններ, 32 մագիստրոսական թեզեր և 56 ավարտական աշխատանքներ: Վերջին երկու տարում ուսանողական հարցման միջին միավորը բարձր է 4.7-ից:

Առաջարկվեց Հ.Հ. Փանոսյանի թեկնածությունը ներառել քվեաթերթում՝ Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համալրման նպատակով հայտարարված մրցույթի փակ գաղտնի քվեարկության անցկացման համար։

Բաց քվեարկությամբ գիտական խորհուրդը (միաձայն) որոշեց մրցույթի մասնակից Հ.Հ. Փանոսյանին երաշխավորել Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու համար և նրա անունը մտցնել փակ գաղտնի քվեարկության քվեաթերթի մեջ։

Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար որոշվեց ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

Նախագահ՝ բ.գ.թ. Ս.Ղ. Պետրոսյան

անդամներ՝ դ.գ.թ. Լ.Յու. Սահակյան

ուսանող՝ Մ.Բ. Ղազարյան:

Ընտրություններից հետո Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի անդամները (20-անդամներից ներկա էին 15-ը) լսեցին հաշվիչ հանձնաժողովի

հաշվետվությունն, ըստ որի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել են գիտխորհրդի 15 անդամներ։ Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու համար Հ.Հ. Փանոսյանին կողմ են քվեարկել գիտխորհրդի 15 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթ՝0։

***Որոշեցին*՝** Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և Հ.Հ. Փանոսյանին համարել ընտրված Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչի պաշտոնում։

2. Ընթացիկ հարցեր

2.1. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի առկա անվճար ուսուցմամբ երկրորդ տարվա ասպիրանտներ Էմմա Առաքելի Խաչատրյանի և Միքայել Սամվելի Թորոսյանի ատեստավորման հարցը։

***Լսեցին*՝** Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար ք.գ.թ., դոցենտ Անի Դադայանին, ով նախ ներկայացրեց ասպիրանտ Էմմա Խաչատրյանի, ապա Միքայել Թորոսյանի ատեստավորման վերաբերյալ տեղեկատվությունը.

- Նա հաղորդեց գիտխորհրդի անդամներին, որ հարցը քննարկվել է Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ընդլայնված նիստում (նիստ 3, առ 20.05.2025թ.) և տեղեկացրեց, որ ասպիրանտ Էմմա Առաքելի Խաչատրյանը ասպիրանտուրայում ուսուցման երկրորդ տարում շարունակել է իր գիտահետազոտական աշխատանքները՝ «Կողային ռադիկալում չհագեցած խմբերով տեղակալված (*S*)-α-ամինաթթուների կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզ և բժշկակենսաբանական սկրինինգ» թեմայով ատենախոսության շրջանակներում։ Էմմա Խաչատրյանի կողմից իրականացվել է դեհիդրոալանինային կոմպլեքսին Պիպերազինի տարբեր ածանցյալների միացում՝ Միքայելի միացման ռեակցիայի միջոցով։ Սինթեզվել են 4 միջանկյալ արգասիք կոմպլեքսներ և անջատվել համապատասխան նպատակային ամինաթթուները։ Ասպիրանտուրայում ուսուցման առաջին տարում դեհիդրոալանինային կոմպլեքսին տարատեսակ պրոպարգիլ խումբ պարունակող սպիրտների Միքայելի միացման ռեակցիայի արդյունքում ստացված միջանկյալ արգասիք կոմպլեքսների կիրառմամբ իրականացվել են անվանական ռեակցիաներ՝ Գլազերի, Սոնոգաշիրայի, Ազիդ-ալկին ցիկլոմիացման (CuAAC), ստացվել են միջանկյալ արգասիք կոմպլեքսներ և անջատվել համապատասխան նպատակային ամինաթթուները։ Կատարված գիտահետազոտական աշխատանքների արդյունքում տպագրվել են 2 հոդված՝ Q1-Q2 քառորդներում ներառված ամսագրերում, ևս մեկ հոդված պատրաստվում է տպագրման։
- Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար ք.գ.թ., դոցենտ Անի Դադայանը գիտխորհրդի անդամներին հաղորդեց, որ հարցը քննարկվել է

Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ընդլայնված նիստում (նիստ 3, առ 20.05.2025թ.) և տեղեկացրեց, որ ասպիրանտ Միքայել Սամվելի Թորոսյանը ասպիրանտուրայում ուսուցման երկրորդ տարում շարունակել է «Եռաչափ տպագրությամբ կերամիկական իմպլանտների ստացումը և դրանց մեջ հակաբիոտիկների ներդրման արդյունավետության հետազոտումը» թեմայով ատենախոսության շրջանակներում նախատեսված գիտահետազոտական աշխատանքները: Նա հաշվետու տարվա ընթացքում կատարել է պոլիէթիլեն գլիկոլ ակրիլատի (PEGDA) համար հարուցիչ հանդիսացող երեքֆոսֆին օքսիդի (TPO) պոլիմերի մատրիցից լուծահանման ուսումնասիրություն, քանի որ TPO-ն թունավոր է: Կատարված աշխատանքների հիման վրա Brazilian Society of Mechanical Science and Engineering ամսագիր տպագրության է ներկայացվել մեկ մոնոհոդված՝ Extraction of trimethylbenzoyl diphenylphosphine oxide from the cured PEGDA-Hydroxyapatite bone graft վերնագրով: Բացի այդ, կատարվել են նաև պոլիմերի հատկությունների բարելավմանն ուղղված աշխատանքներ, որոնց արդյունքնում տպագրության է պատրաստվել Effect of layer thickness of 3D printed dielectric elastomers վերնագրով հոդվածը, որն ուղարկվել է Advanced Materials Technologies ամսագիր: Այն գտնվում է գրախոսության փուլում:

Որոշեցին՝ բաց քվեարկությամբ (միաձայն), հաշվի առնելով ամբիոնի կարծիքը և ասպիրանտուրայում ուսուցման երկրորդ տարում կատարված աշխատանքները՝ ատեստավորել ասպիրանտ Էմմա Առաքելի Խաչատրյանին և Միքայել Սամվելի Թորոսյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝

բ.գ.թ, դոցենտ **Ա. Մկրտչյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝

բ.գ.թ., դոցենտ **Ա. Դադայան**